**ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ,** 1937 թվականը Հայաստանում, Ե., «Զանգակ» հրատ., 2017, 96 էջ:




Հայ (և ոչ միայն հայ) պատմագրության և հրապարակագրության մեջ մշտապես արդիական են այն թեմաները, որոնք առնչվում են 1930-ական թթ. ԽՍՀՄ-ի ողջ տարածքում տեղի ունեցած զանգվածային բռնաճնշումներին, քաղաքական հետապնդումներին և հալածանքներին: Այդ ժամանակաշրջանը հետխորհրդային երկրների պատմության և գրականության էջերում կրում է «1937 թվականը» խորհրդանշական անվանումը:

Այդ սարսափելի դեպքերի ու իրողությունների մասին շատ է գրվել ու խոսվել, բազմաթիվ ստեղծագործություններ են հրապարակվել: Ի լրումն այս ամենին օրերս լույս տեսավ ևս մեկ հետազոտություն: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակվեց պատմագիտության դոկտոր, պրոֆ. Արարատ Հակոբյանի «1937 թվականը Հայաստանում» խորագրով ուշագրավ աշխատությունը (գրախոսող՝ պատմ. գիտ. դոկտոր Ամատունի Վիրաբյան):

Առաջադրելով «Ո՞վ էր մեղավոր» հիմնահարցը՝ հեղինակը քննության է առնում իշխող տարրի՝ ռուսների, նաև ռուսական պետության ու պետականության դարավոր առանձնահատկություններն ու տիպական գծերը:

Ա. Հակոբյանը դիտարկում է այն հանգամանքը, որ ռուսական պետականությունը հարյուրամյակներ շարունակ հանգամանքների բերումով ունեցել է բռնատիրական բնույթ: Դաժանությունն ու բռնությունը խիստ բնորոշ են եղել ռուսական պետական համակարգին: Անգամ XVIII դ. հայտնի փիլիսոփա Շ. Մոնտեսքյուն ռուսական ինքնակալության առաջացման գործում ընդգծում էր աշխարհագրական դետերմինիզմի՝ ռուսական ցուրտ կլիմայի և հսկայածավալ տարածքների խիստ կենտրոնացված կառավարման անհրաժեշտության հանգամանքը:

Ա. Հակոբյանը պատմական փաստերի և բուն պատմության ընթացքի համոզիչ քննությամբ ռուսաց պետականության նախորդ դարերում առկա գործընթացները օրգանապես կապում է XX դարում Ռուսաստանում հաս-

տատված ամբողջատիրական, միակուսակցական վարչակարգի հետ: Այնքան համոզիչ և փաստարկված է նա ներկայացնում այդ իրողությունը, որ ընթերցողը չի տարակուսում ցարական ու բոլշևիկյան վարչակարգերի միջև գոյություն ունեցող ներքին ընդհանուր օրինաչափությունների հոգեհարազատության մասին:

Պատմաբանը իրավամբ նշում է, որ ինքնակալական համակարգը հարյուրամյակներ շարունակ ներկայացվել է որպես Ռուսաստանի կառավարմանը բնորոշ միակ ձև ու քաղաքական արժեք, իսկ ռուս հասարակության տարբեր ու խավերն ու խմբերը հարմարվել ու ընտելացել են այդ համակարգին՝ այն ընդունելով իբրև բնական վիճակ: Ինչպես ցարերն են այդ հսկայական երկրին տիրել ու իշխել որպես ժառանգական ուդելային կալվածքի, այնպես էլ XX դարում հողը, արտադրության մյուս միջոցները, ազգային հարստությունները պետականացնելու, տիրելու և յուրօրինակ «ուդելային կալվածքի» վերածելու ավանդույթը հեշտությամբ են ընդօրինակել խորհրդային շրջանի բոլշևիկ առաջնորդները: Երկու դեպքում էլ՝ ինչպես ցարիզմի, այնպես էլ կոմունիստական ամբողջատիրության ժամանակաշրջանում, իշխանությանը թույլատրվում էր ամեն ինչ, պետական բռնաճնշիչ մեքենան կոպտորեն միջամտում էր մարդկանց անձնական ու հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներին: Ե՛վ ցարական, և՛ բոլշևիկյան Ռուսաստանում ապրող մարդը ընդամենը եղել է պետական մեքենայի մի պտուտակը:

Ըստ Ա. Հակոբյանի, 1930-ական թթ. Խորհրդային Միությունում ստեղծված վախի մթնոլորտն ու մատնությունների մեխանիզմի ձևավորումը պայմանավորված էին խորհրդային կուսակցական-պետական համակարգի բնույթով, ուստի դրանք բնավ էլ պատահական երևույթներ չէին: Հիմնավոր կերպով փաստարկվում է այն հանգամանքը, որ խորհրդային այդ տերմիդորին ավել կամ պակաս չափով մասնակից են եղել կուսակցական-պետական ընտրախավը, բյուրոկրատական-նոմենկլատուրային ողջ ապարատը, շարքային բազմաթիվ կուսակցականներ: Վերևից ուղղորդված ու պարտադրված հանգամանքներում խորհրդային հասարակությունը ապրել ու գործել է վախի, կեղծիքի, մատնությունների ու կասկածամտության ամենօրյա մթնոլորտում:

Պատմաբանը համոզիչ տրամաբանությամբ փաստարկում է. «Մարդիկ, դրդված սպառնալիքից, վախից, թելադրված ինքնապաշտպանության բնազդով և այլն, դիմում էին մատնությունների՝ միմյանց դեմ մատնագրեր գրելով, կեղծ ու ստահոդ լուրեր տարածելով՝ իրարից հաշիվ մաքրելու, շատ դեպքերում իրարից անձնական վրեժ լուծելու, պաշտոն ու արտոնություն ստանալու, վերադասին շողոքորթելու և այլ նկատառումներով: Եվ այդ

բռնությունների ու կեղտոտ, մարդասպան հասարակական-քաղաքական մթնոլորտի պատճառը պետք է փնտրել ոչ թե մատնիչ հարևանի կամ վերադասին ստորաքարշող պաշտոնամոլի, այսինչ ծառայողի, չեկիստի, այլ խորհրդային երկրում ձևավորված միակուսակցական ամբողջատիրական ավտորիտար համակարգի մեջ» (էջ 32):

Հեղինակը, ընդհանրացնելով վերլուծական-քննական դիտարկումները, ի ցույց է դնում այն մեթոդները, որոնցով գործել են պետական մարմինները հարյուր հազարավոր և միլիոնավոր մարդկանց ձերբակալելու և մեղադրանք ներկայացնելու տևական գործընթացներում: Սահմռկեցուցիչ փաստերով ներկայացված է դաժանության այն ողջ ներկապնակը, որը հատուկ է եղել դահիճներին ու այդ ահավոր ժամանակաշրջանին: «Ձերբակալությունների և մեղադրանք ներկայացնելու «հիմքերը» և մեթոդաբանությունը», «Հատվածականության գործոնը բռնաճնշումներում», «Հարցաքննությունների շարժընթացը և արձանագրությունների նմանությունը», «Ցուցմունքներ կորզելու եղանակները», «Դատավարություն անցկացնող դատական ատյանների և մի քանի բնորոշ դատավարությունների մասին», «Բռնաճնշումների ենթակա մարդկանց ձերբակալությունների խմբաքանակների (լիմիտ) պլանավորման մասին» բաժիններում բացահայտվում են ստալինյան դահճային քաղաքականության ողջ զինանոցի էությունը, դրա աննախադեպ դաժանությունն ու ստորությունը:

Գրքում փաստարկված կերպով ներկայացված են ԽՍՀՄ-ում (նաև Հայաստանում) բռնաճնշումների տարբեր փուլերը, բռնաճնշումների կազմակերպված ու պլանավորված ընթացքն ու բնույթը: Ա. Հակոբյանի սույն ուսումնասիրությունը ևս մեկ անգամ հիմնավոր կերպով փաստում է, որ ԽՍՀՄ-ում 1920-30-ական թթ. իրագործված զանգվածային բռնաճնշումների կիզակետում է եղել նաև Խորհրդային Հայաստանը: Նրա դիտարկումներով, 1920-1953 թթ. Հայաստանում բռնադատվածների ընդհանուր թիվը կազմել է մոտ 42 հազար մարդ, որոնց մի զգալի մասը դատապարտվել է 1-ին կատեգորիայով՝ գնդակահարության, մյուսները՝ 2-րդ կատեգորիայով՝ բանտի և աքսորի: Հայաստանում մեղադրյալներին ներկայացված ամենատարածված քաղաքական մեղադրանքներն էին՝ հակախորհրդային, թշնամական վնասակար տարր, նախկին դաշնակցական լինելը, նրա՝ ընդհատակյա կազմակերպություններին և ժողովներին մասնակցելը կամ դրանց հետ կապ ունենալը, 1921 թ. փետրվարյան ապստամբությանը (ավանտյուրային) մասնակցելը, ինչպես նաև կուլակային տարր, նախկին խմբապետ, ավազակային (բանդիտական) խմբի ղեկավար կամ անդամ, տրոցկիստ-ահաբեկիչ լինելը և այլն:

Սակայն դրանք կեղծ մեղադրանքներ էին, և ինչպես ճշմարտացիորեն նշում է աշխատության հեղինակը, մեզանում պարզապես եղել են ազգային նկարագիր ունեցող առանձին մտավորականներ ու գործիչներ, որոնք նեղ շրջանակներում խոսել են Հայաստանին ու հայ ժողովրդին հուզող ազգային խնդիրներից և ցանկություն են հայտնել, որ Հայաստանին վերադարձվեն նրանից անարդարացիորեն բռնազավթված հողերը՝ Լեռնային Ղարաբաղը, Սուրմալուն, Կարսը, Նախիջևանը, Ախալքալաքը (էջ 87):

Արարատ Հակոբյանի սույն աշխատությունը ոչ միայն գիտական հավաստի պարզաբանումներով ներկայացնում է մեր երկրի պատմությանն ու արդիականությանն առնչվող մի շարք հարցեր, այլև արժեքավոր ներդրում է իր այն առաքելությամբ, որ գալիք սերունդներին հորդորում է չմոռանալ ժողովուրդների ապրած մեծ ողբերգության և ընդհանրապես պատմության դասերը, քանզի նրանք, ովքեր մոռանում են այդ ողբերգական իրադարձությունները, դատապարտված են նորից անցնելու կրած կորուստների, հալածանքների ու բռնաճնշումների թոհուբոհով:

1937 թվականի մեծ ողբերգությունը երբեք չպետք է մոռացվի. միայն այդ հանգամանքը կարող է բացառվել դրա կրկնությունը:

**ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ա.Հ.**
Պատմական գիտությունների թեկնածու